



## 9. ՕՍԿՈՒ ԿԱՐԱՍ

Ժամանակով էրկու ախպեր գարնան դեմ գելնան լուծք. մեկ մանջ կը բռնե, մեկել հորիք կը քշե: էդ ախպրտիք հըտ չիրար շա՛տ սիրով կէղնին. հերկելու վախտ խոփ կասըռկի, շատ օր կը դոռին՝ օսկով լիք կարաս մե գելնա:

Մանջկալ կըսե.

— Վո՛ւա, օսկի գտա:

Հորեվոր կըսե.

— Մր՛սի «գտա», ըսե «գտա՛նք»:

էն՝ հա՛, էս՝ շէ՛, էս՝ հա՛, էն՝ շէ՛, հըտ չիրար կը կովին, օր կը կովին՝ էդ խազնի տեր հալվոր կը կանի չառեջ ուրանց՝ կըսե.

— Տղե՛կներ, օսկու խաղնեն իմն է, կիտամ ձըզի, չո՛րին կը կովիք հըտ չիրար: Մանջկա՛լ, հորեվորն օղորդ կըսե, դու պտի ըսեր «գտանք» մըջ չիրար հալալ բաժնեք ձեր իղբալ:

Կըսե, աներևութք կէղնի:

Մանջկալն ու հորեվոր չիրար կիշկին, կը զարմանան վըր հրաշքին, օսկով լիք կարաս չառջև ուրանց՝ շըն դինա ի՛նչ էնին: Խել մե գընցնա՛ էդ խալբ մանջկալ կըսե.

— Զա՛նըմ, ես օր մանջ դուզ շը բռնենք՝ հըրոր օղոր պտի էրթեր, կարաս շըբ չելնի. օսկին մինակ իմն է:

— Ա՛խպեր,— կըսե հորեմբոր,— ես լե գհորիք օր դուզ չը քշենք՝  
քու խոփ օղոր կէրթեր, չըր կպի կարսին, օսկին չըր քեւնի: Ա՛,  
ա՛խպեր, մըջ մըզի հալալ բաժնինք:

էն՝ չէ՛, էս՝ հա՛, էս՝ հա՛, էն՝ չէ՛, կը դարշտին, խոսքի չըն քիդա,  
կը քաշին քիրար դըրրի տակ, էն խդեր կը զարկին, օր կէդնին  
արունւմիկ, մեկ լե կիշկին՝ նա՛ կարաս, նա՛ օսկի: Հալմոր զըդոց  
իդրալ կտրի, զխազնեն տարեր էր:

